

ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ ԵՄ - ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Մարտ, 2021թ.
Հրատարակվել է ՀԸԳՀ ուժի մեջ մտնելու կապակցությամբ

Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունները հիմնված են **Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ)** վրա: Այն ժամանակակից, հավակնոտ փաստաթուղթ է, որը ստորագրվել է 2017թ. նոյեմբերի 24-ին և **լիարժեքորեն ուժի մեջ կմտնի 2021թ.** մարտի 1-ից: Այն համաձայնագիրը Հայաստանի ու ԵՄ-ի համար հիմք է ապահովում ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների ամրապնդման, նոր աշխատատեղերի ու գործարար հնարավորությունների ստեղծման, ավելի արդար կանոնների հաստատման, ապահովության և անվտանգության բարելավման, ավելի մաքուր շրջակա միջավայրի, ինչպես նաև՝ ավելի լավ կրթության ու հետազոտական հնարավորությունների ոլորտներում փոխադարձ շահերը զարգացնելու համար:

ԵՄ-ն Հայաստանում իրականացվող բարեփոխումների առանցքային գործընկերն է: ԵՄ-ն ավելացրել է իր աջակցության ծավալները և գրեթե կրկնապատկել ամենամյա դրամաշնորհային հատկացումները, որոնք 2019 և 2020 թվականներին տարեկան կազմել են 65 միլիոն եվրո: ԵՄ-ն իր ներկայիս պորտֆելի էական մասն ուղղում է կառավարության բարեփոխումների օրակարգին, մասնավոր հատվածի զարգացմանը, մարդկային կապիտալին ու թիրախային մարզերի զարգացմանը: Բացի այդ, 2014 թ.-ից ի վեր խառը վարկերի և դրամաշնորհների տեսքով ավելի քան 1 միլիարդ եվրո է ներդրվել ենթակառուցվածքային, գյուղատնտեսության ու տրանսպորտի հատվածներում:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

✓ ԵՄ-ն շարունակում է լինել Հայաստանի **հիմնական արտահանման և ներմուծման շուկան** և Հայաստանի տնտեսությունը օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքի խոշորագույն աղբյուրներից մեկը: ԵՄ անդամ պետությունների կապիտալով գործող ընկերությունները ՀՀ խոշոր հարկատուների և գործատուների թվում են:

✓ Հայ արտահանողները շարունակում են օգտվել GSP+ ռեժիմի շրջանակներում ԵՄ-ի կողմից առաջարկվող առևտրային առավելություններից: **GSP+-ի միջոցով Հայաստանից դեպի ԵՄ արտահանման ծավալներն** աճել են՝ 2016թ. 108 միլիոն եվրոյից 2019 թ.-ին հասնելով 197 միլիոն եվրոյի:

✓ ԵՄ-ն հայաստանյան ընկերություններին տրամադրում է գիտելիքների և ֆինանսական միջոցների հասանելիություն, ինչպես նաև՝ նոր շուկաներ մուտք գործելու աջակցություն, այդ թվում՝ «EU4Business» («ԵՄ-ն բիզնեսի համար») նախաձեռնության միջոցով: 2009 թ.-ից ի վեր Եվրոպական միության կողմից ներդրված 40 միլիոն եվրո միջոցները նպաստել են ավելի քան 450 միլիոն եվրո վարկերի ու լրացուցիչ ֆինանսական օգնության ներգրավմանը: Արդյունքում, օգտվել են **25000 ՓՄՁ-ներ և ստեղծվել է շուրջ 3200 նոր աշխատատեղ:**

✓ ԵՄ-ն իր «**Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում**» ծրագրով աջակցում է կայուն, նորարարական և շուկայամետ ագրոբիզնեսի զարգացմանը, որպեսզի արագացնի կայուն պարենային համակարգի անցումը:

✓ ԵՄ-ն Հայաստանի տարբեր մարզերում աջակցում է **զբոսաշրջության ոլորտի** զարգացմանը: Զբոսաշրջության ինդուստրիան ակադեմիան, Դիլիջանում Զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնն ու Արվեստների և արհեստների կենտրոնները, «Դիլիջան» ազգային պարկում 11 արշավային արահետների ու Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում 300կմ երկարությամբ արահետների գծանշումն ու քարտեզագրումը, Ճամբարակի տարածքային բրենդի մշակումը, պատմական «Արենի-1» քարանձավի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի հիմնադրումը և Աշոցքի լեռնադահուկային կենտրոնը բոլորը կյանքի են կոչվել ԵՄ աջակցությամբ: Այն նախագծերի միջոցով տեղի բնակչության համար ստեղծվել է ավելի քան 100 նոր աշխատատեղ, և աջակցություն են ստացել ավելի քան 300 տեղական ՓՄՁ-ներ: 2020 թ.-ին 30 զբոսաշրջային ընկերություններ աջակցություն ստացան՝ COVID-19 համավարակի հետևանքները հարթահարելու համար:

✓ ԵՄ-ի ֆինանսավորմամբ «EU4Regions. աջակցություն Հայաստանում տարածքային զարգացման քաղաքականությանը» պիլոտային ծրագիրն **աջակցել է տարածաշրջանային և տեղական տնտեսական զարգացմանը՝** ստեղծելով 550 նոր աշխատատեղ և բարձրացնելով շուրջ 700 ընկերությունների մրցունակությունը: Հատուկ աջակցություն է ցուցաբերվել 2800 անհատների՝ վերջիններիս աշխատունակությունը բարելավելու նպատակով:

✓ ԵՄ-ն աջակցում է գյուղական վայրերում **երեխաների ներառական և վաղ խնամքի ու կրթության մատչելիության բարելավմանը**, ինչը երեխաներին թույլ է տալիս ավելի լավ նախապատրաստվել տարրական դպրոցին, իսկ մայրերին ու ընտանիքներին հնարավորություն է տալիս շարունակել հետագա կրթությունը, փնտրել աշխատանք և մասնակցել համայնքային գործերին և հմտությունների ձեռք բերման կամ եկամուտների գեներացման հետ կապված այլ դասընթացների ու դրամաշնորհների մրցույթների:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

✓ ԵՄ-ն աջակցում է Հայաստանում **ժողովրդավարական կառավարման** բարեփոխումներին, օրենքի գերակայությանը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների առաջնահայացմանն ու պաշտպանությանը, այդ թվում՝ խոցելի խմբերի ու անհատների ավելի լավ ինտեգրմանն աջակցելու միջոցառումներին և խտրականության դեմ պայքարի ջանքերին:

✓ Հայաստանի **ընտրական համակարգի** թափանցիկության և ամբողջականության բարելավման նպատակով ԵՄ-ն, հաճախ որպես խոշորագույն առանձին ներդրող, աջակցել է Հայաստանում վերջին երեք ընտրական շրջանների անցկացմանը, այդ թվում՝ տեխնիկական սարքավորումներով: Այդ աջակցությունն ուղղված էր զսպելու ընտրողների ահաբեկման և ընտրակեղծիքների դրսևորումները, ինչպես նաև խթանելու քաղաքացիական մասնակցության և ներքին դիտորդական գործողությունները:

✓ **Արդարադատության ոլորտում** ԵՄ-Հայաստան ռազմավարական քաղաքականության երկխոսության միջոցով ԵՄ-ն աջակցում է արդարադատության ոլորտում եվրոպական չափանիշներին համապատասխան բարեփոխումների իրականացմանը, մասնավորապես՝ **դատախիրավական բարեփոխումների համապարփակ ռազմավարության** իրականացմանն աջակցելու և այդպիսով դատական համակարգի անկախությունը, հաշվետվողականությունը և արդյունավետությունը խթանելու ու դատական ենթակառուցվածքները բարելավելու, այդ թվում՝ Էլեկտրոնային արդարադատության գործիքներ մշակելու և ներդնելու միջոցով:

✓ ԵՄ-ն աջակցում է **կոռուպցիայի դեմ պայքարում** ՀՀ կառավարության ջանքերին՝ օժանդակելով վերջինիս հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանն ու քաղաքացիական նախաձեռնություններին, որոնք նպաստում են տեղեկատվության մատչելիությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը, ինչպես նաև կառավարության հակակոռուպցիոն ջանքերի մոնիտորինգին:

✓ ԵՄ-ն աջակցում է **ոստիկանության բարեփոխման** ուղղությամբ կառավարության ջանքերին:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐ ԵՎ ԿԱՊ

✓ ԵՄ-ն ֆինանսավորում է Հայաստանի և Վրաստանի միջև **Էներգավիճակաբանական և Էներգատարանցման** բարելավմանը, մասնավորապես՝ Հայաստանը տարածաշրջանային էլեկտրացանցին կապելու ճանապարհով:

✓ Հայ-վրացական սահմանին տեղակայված սահմանային անցակետերը վերակառուցվել և համարվել են ժամանակակից ենթակառուցվածքներով ու սարքավորումներով, պարզեցված ընթացակարգերով, ինչպես նաև **Ժամանակակից սահմանային կառավարման համակարգով**: ԵՄ-ն աջակցում է հայ-իրանական սահմանին Սեդրիի սահմանային անցակետի արդիականացմանը: Այն Հայաստանին կօգնի դառնալ տարածաշրջանային հանգույց՝ ոլորացնելով շարժունակությունը և խթանելով տարածաշրջանային տնտեսական ակտիվությունը, ինչպես նաև կբարելավի Հայաստանի տարածաշրջանային և միջազգային կապերը:

✓ ԵՄ-ն աջակցում է **Սիսիան - Քաջարան ճանապարհային նախագծին**, որը կբարելավի Հայաստանում տրանսպորտային հաղորդակցությունը և կգարգացնի Վրաստանի, Հայաստանի և Իրանի միջև հիմնական տրանսպորտային ուղին:

✓ **ԵՄ-Հայաստան օդային տրանսպորտի համաձայնագիրն**, ուժի մեջ մտնելուն պես, ճանապարհի կհարթի ավելի մեծ թվով ճանապարհորդների փոխանակման, ցածր գների և նոր գործարար հնարավորությունների համար:

✓ ԵՄ ֆինանսական օժանդակությամբ Երևանում հիմնանորոգվել է **Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնի (ՇՄՍՏԿ) լաբորատորիան**: Այն այժմ հագեցած է ջրի որակի մոնիթորինգի գերժամանակակից վերլուծական սարքավորումներով, ինչը մեծ քայլ առաջ է ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ուղղությամբ և նպաստում է ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվին մոտարկմանը:

✓ ԵՄ-ն աջակցում է **Սևանա լճի** շրջակա միջավայրի պաշտպանությանը և այդ նպատակով իրականացնում է «EU4Sevan» («ԵՄ-ն Սևանի համար») ծրագիրը՝ նպատակ ունենալով բարելավել Էկոհամակարգի կառավարումն ու կայուն օգտագործումը կարգավորող ընդհանուր համակարգը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

✓ ԵՄ-ի ու ՀՀ-ի միջև **Վիզաների ոլորացման և ռեադիսիայի (հետընդունման) համաձայնագրերը**, որոնք ուժի մեջ են մտել 2014 թ.-ին, ՀՀ քաղաքացիների համար ավելի հեշտ, ավելի արագ և ավելի էժան են դարձնում վիզաների ստացումը:

✓ ԵՄ-ն աջակցում է Հայաստանում **գենդերային հավասարության** ամրապնդմանն ուղղված ջանքերին, այդ թվում՝ սեռով պայմանավորված հիլոլային արհեստական ընդհատման մակարդակի իջեցմանը, գենդերային բռնության կանխարգելմանը և աղջիկների ու կանանց քաղաքական և տնտեսական հզորացմանը:

✓ ԵՄ-ն ֆինանսավորում է **քաղաքացիական հասարակության** նորարարական նախաձեռնություններին և սոցիալական ձեռնարկություններին, որոնք հանրապետությունով մեկ աջակցում են համայնքային և նախաձեռնող խմբերի, ներառյալ՝ հաշվետվողական, երիտասարդական, բնապահպանական, կրթական և առողջապահական մի շարք նախաձեռնություններին:

✓ Մշակվել են նաև նոր աշխատանքային նախաձեռնություններ՝ **հաշմանդամություն ունեցող** անձանց և կրանց ծնողների համար: Հաշմանդամություն ունեցող անձինք 2018 թվականի դեկտեմբերին կայացած ընտրությունների ժամանակ առաջին անգամ ներգրավվել են տեղական ընտրությունների դիտորդական առաքելություններում: Գյումրիի «Արեգակ» փոռ-սրճարանը Հայաստանում առաջինն է իր տեսակի մեջ, որը բանեցվում է հաշմանդամություն ունեցող մարդկանց կողմից:

✓ «**Էրագմուս +**»-ի (2014-2020թթ.) շրջանակներում հայաստանցի ավելի քան 3100 ուսանող և դասախոս սովորել կամ դասավանդել են Եվրոպայում, 1650 եվրոպացի էլ նույն նպատակով եկել են Հայաստան: Բացի այդ, շուրջ 10000 երիտասարդ և երիտասարդական ոլորտի աշխատող մասնակցել են կարճաժամկետ փոխանակումային, շարժունակության, ուսումնական և կամավորական ծրագրերի:

✓ Շուրջ 570 հայկական դպրոց և գրեթե 1900 ուսուցիչ է ներգրավվել «**Իթվինինգ Պլյուս**» հարթակում՝ առցանց գործիքների կիրառմամբ համագործակցության ընդլայնման համար:

✓ ԵՄ-ն իր «EU4Innovation» պիլոտային աշխատանք Հայաստանի STEM բնագավառում՝ ծրագրի միջոցով նպաստում է **STEM կրթության** բարելավմանը Հայաստանի պիլոտային մարզում:

✓ ԵՄ-ն աջակցում է **ատելության խոսքի և ապատեղեկատվության զսպման ջանքերին**: Այն նաև աջակցում է անկախ լրատվամիջոցներին՝ իրենց ռազմավարությունները 21-րդ դարի մեդիա մարտահրավերներին հարմարեցնելու հարցում:

ԵՄ-Ն COVID-19 ՀԱՄԱԿԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՆԳՆԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՔԻՆ

ԵՄ-ն արագ արձագանքեց COVID-19 համավարակի ընթացքում Արևելյան գործընկերության երկրների հրատապ կարիքներին: «Team Europe» Նախաձեռնության շրջանակներում ԵՄ-ն մոբիլիզացրել է շուրջ **1 միլիարդ եվրո** ընդհանուր արժեքով աջակցության հավանաբար փաթեթ՝ օգնելով վեց երկրների ինչպես հրատապ կարիքների (օրինակ՝ ամողջապահության ոլորտին և խոցելի համայնքներին աջակցությունը), այնպես էլ կարճաժամկետ կարիքների լուծմանը՝ ի աջակցություն դրանց սոցիալական և տնտեսական վերականգնմանը:

Այս շրջանակներում Հայաստանի համար մոբիլիզացվեց COVID-19-ի դեմ պայքարի ավելի քան **92 միլիոն եվրո** արժողությամբ առանձին փաթեթ՝ օգտագործելով ընթացիկ և նոր ֆինանսական միջոցների խառնուրդ՝ մարդկանց կոնկրետ աջակցություն ցուցաբերելու համար: Այն ներառում է արդեն իսկ հատկացված 65 միլիոն եվրոյի ուղղակի բյուջետային աջակցությունը, ՓՄՁ-ների համար ֆինանսական միջոցների մատչելիությունը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից մշակված և իրականացվող համայնքային աջակցության նախաձեռնությունները:

✓ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ԵՎ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

• ԵՄ-ն պատվաստանյութերին արդար և հավասար հասանելիություն ապահովելու լավագույն միջոցի՝ COVAX-ի խոշորագույն աջակիցներից մեկն է: Այն աշխատում է նաև ԱՀԿ-ի հետ՝ այդ թվում նաև Հայաստանում անվտանգ և արդյունավետ պատվաստման համար պատրաստության և պատրաստվածության ապահովման ուղղությամբ հրատապ աջակցություն ցուցաբերելու նպատակով:

• Համագործակցություն ԱՀԿ-ի հետ՝ բժշկական սարքավորումների և անհատական պաշտպանության միջոցների մատակարարման համար, ինչպիսիք են՝ թեստավորման հավաքածուները, դիմակները, ձեռնոցները, ակնոցները, պաշտպանական համազգեստները և խալաթները: Բժշկական և լաբորատոր անձնակազմերի վերապատրաստում:

• Ընդունվել է հանրային ամողջապահության ոլորտում էլեկտրոնային ամողջապահության միասնական համակարգի ներդրման ճանապարհային քարտեզ: Արդեն իսկ գործում են էլեկտրոնային ամողջապահության վեց ռեգիստր և պորտալ:

• Արտակարգ իրավիճակների նախարարությանը Շվեդիայի և Լիտվայի քաղաքացիական պաշտպանության գործակալությունների հետ համատեղ աջակցության ցուցաբերում՝ քաղաքացիական պաշտպանության և աղետների ռիսկերի կառավարումը բարելավելու համար:

✓ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԱՔԱՏԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻՆ

• Արտահերթ դրամաշնորհներ՝ խոցելի քաղաքացիներին, տարեցներին և երեխաներին աջակցություն ցուցաբերելու համար:

• Մեկուսացված համայնքների ավելի քան 350 երեխաների համար կրթության հավասար հասանելիություն ապահովող հեռավար ուսուցման գործիք:

• Հայաստանում սոցիալական փոփոխություններին և ներառական ու կայուն զարգացմանն ուղղված դրամաշնորհներ:

• ԵՄ աջակցությամբ կատարելագործվել ու փորձարկվել է ընտանեկան բռնության վտանգի տակ գտնվող կանանց և երեխաների համար նախատեսված SafeYou հավելվածը, որը վերջիններիս թույլ է տալիս ամանց զանգեր կատարելու դիմել օգնության կենտրոններին և թեժ գծերին:

✓ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՓՄՁ-ՆԵՐԻՆ

• ՓՄՁ-ներն ու ինքնազբաղվածները «EU4Business» Նախաձեռնության միջոցով կարող են օգտվել դրամաշնորհներից, վարկերից և գործարար խորհրդատվության հնարավորություններից՝ ճգնաժամին դիմակայելու համար:

• ԵՄ-ն հանդես է եկել մի շարք անվճար առցանց դասընթացների առաջարկով, որոնք ուղղված են օգնելու ավելի քան 1000 հայկական ՓՄՁ-ներին՝ նոր թվային մոտեցումներ մշակել իրենց բիզնեսների համար:

• Մշակվում է առցանց վաճառքի նոր հարթակ, որը հուշավեր արտադրողներին, ձեռագործ վարպետներին և այլ միկրոձեռներեցներին թույլ կտա շուկա հանել և վաճառել իրենց արտադրանքը:

✓ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻՍԿԱԼ ԴԻՍԱԿԱՑՈՒՈՒԹՅԱՆ Ը

• Հայաստանի Հանրապետության ազգային վարչակազմին ֆինանսական աջակցության ավելացում՝ COVID-19-ի բռնկման և հետագա նմանատիպ ճգնումների դեմ պայքարի համար ամողջապահական համակարգի դիմակայունությունն անհրաժեշտ գործիքակազմով ամրապնդելու, COVID-19-ի բռնկման հետևանքների հարթափարման նպատակով հայաստանցիների համար սոցիալական աջակցության հասանելիություն ապահովելու, ինչպես նաև բիզնեսների տնտեսական վերականգնմանն աջակցելու նպատակով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

արդեն իսկ ցուցաբերված աջակցության օրինակներ

Շիրակի, Տավուշի և Լոռու մարզերում մարդասիրական օգնության փաթեթներ են ստացել ավելի քան

3,000

անապահով տնային տնտեսություններ, այդ թվում՝ տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք և բազմանդամ ընտանիքներ:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին տրամադրվել են **անհատական պաշտպանության միջոցներ**, այդ թվում՝

6,000 ձեռնոց,

2,300 բժշկական դիմակ,
70 լիտր ախտահանող գել և

5 ոչ կոնտակտային ինֆրակարմիր ջերմաչափ՝ քաղաքացիների հետ անվտանգ և անխափան աշխատանքն ու փոխգործակցությունը հեշտացնելու համար:

ԵՄ-ի կողմից աջակցություն ստացած եռաչափ տպիչներ արտադրող «AugmentAR» ընկերությունն արտադրել է ավելի քան

4,000 դեմքի պաշտպանիչ դիմակ և

ակնոց ու դրանք նվիրել է **50** հիվանդանոցի:

Հաջողությունն ակնհայտորեն ոգեշնչել է ընկերության աշխատակիցներին, ովքեր հիմա աշխատում են արհեստական շնչառության սարքեր տպելու համար անհրաժեշտ ֆայլերի մշակման վրա:

EU4Youth-ը հայաստանյան ստարտափներին տրամադրում է

առցանց խորհրդատվություն

օգնելով նրանց վերսկսել ու շարունակել իրենց գործունեությունը՝ չնայած COVID-19 համավարակին: Հայ երիտասարդ ձեռնարկատեր Արևշատ Ղարիբյանը ստացել է իր սեփական սննդի վերամշակման բիզնեսը ստեղծելու և աշխատակազմի անվտանգության նոր պահանջներին հարմարվելու աջակցություն ու հաջողությամբ կարողացել է պահպանել արտադրության անխափան գործունեությունը՝ չնայած COVID-19 համավարակին:

ԹՎԵՐ

ԵՄ-ի և Հայաստանի միջև ընդհանուր երկկողմ առևտուրը վերջին 10 տարիներին աճում է՝ 2019 թվականին հասնելով շուրջ

1,2 միլիարդ եվրոյի:

ԵՄ-ն աջակցում է բազմաթիվ

հայկական բիզնեսներին:

Այդպիսի օրինակներ են թեյի, մեղրի և չիերի արտադրությամբ զբաղվող «Սարերի բարիք» և «Հօլանի» ապրանքանիշերը, պլաստիկ շշերը պլաստիկ տոպրակների վերածող «Մաքուր Գորիս» շրջանաձև տնտեսության նախաձեռնությունը, եթերայուղերի արտադրությունը, ««Թոնիր» հարսանեկան գյուղ» ձեռնարկությունը և «ԱՐԿ» Էկոճամբարը:

ԵՄ աջակցության շնորհիվ

Երևանի մետրոպոլիտենը

վերազինվել է ժամանակակից շարժակազմերով, ապահովվել է մետրոպոլիտենի առավել անվտանգ գործառնությունը և ինսայվել է զգալի չափով էլեկտրաէներգիա:

7000

տնային տնտեսություններ ստացել են Էներգաարդյունավետ վերանորոգման աջակցություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

Հայաստանը 2016 թ. -ից ասոցացված է ԵՄ առաջատար հետազոտական և նորարարական ծրագրին՝ «Հորիզոն 2020»-ին: Սա ԵՄ-ի հետ հետազոտությունների և նորարարությունների ոլորտում համագործակցության կարևոր հանգրվան էր: Հայաստանյան գիտա-հետազոտական ինստիտուտները, համալսարանները և անհատ հետազոտողները, ինչպես նաև՝ գործարարներն այժմ ԵՄ անդամ պետությունների հետազոտողների հետ հավասար հասանելիություն ունեն ծրագրի առաջարկած հնարավորությունների նկատմամբ՝ սկսած հիմնարար գիտությունից, վերջացրած՝ ցուցադրական նախագծերով: Հայկական կազմակերպությունները 42 մասնակցություն են ունեցել 34 դրամաշնորհային ծրագրերի՝ Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողությունների (MSCA), Եվրոպական հետազոտական խորհրդի (ERC) դրամաշնորհների և «Հորիզոն 2020»-ի ՓՄՁ գործիքի գործողությունների շրջանակներում՝ ստանալով 3.6 միլիոն եվրոյի ԵՄ ուղղակի ներդրում: «Հորիզոն 2020»-ի շրջանակներում Հայաստանի լավագույն արդյունքները հետազոտական ենթակառուցվածքների, ՓՄՁ-ներում նորարարությունների և MSCA-ի ոլորտներում են:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՉԵՄՊԻՈՆՆԵՐ

ԵՄ-ն Հայաստանում էլեկտրոնային կառավարման հիմնական ջատագովն է: Այս դրությամբ, ԵՄ-ի աջակցությունը ներառում է ՀՀ կառավարական հաստատություններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Մայքրի» համակարգի (անթուղթ նախարարության հայեցակարգ) ներդրումը, հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը, քաղաքացիական կառուցվածքի ակտերի գրանցման էլեկտրոնային ռեգիստրը, «մեկ պատուհան» սկզբունքով ավտոմեքենաների գրանցման համակարգը, վարորդական վկայականի տրամադրման ավտոմատացված համակարգը, առցանց «էլեկտրոնային ոստիկանությունը», պաշտոնական նամակագրության e-citizen.am պորտալը, էլեկտրոնային վիզայի համակարգը, էլեկտրոնային ապոստիլի համակարգը, էլեկտրոնային նոտարը, իրավական ակտերի նախագծերի իրապարկման e-draft.am հարթակը, էլեկտրոնային հարցումների, բողոքների և առաջարկությունների ներկայացման e-request.am հարթակը և բիզնեսի գրանցման առցանց համակարգը: Բացի այդ, ներկայում ընթացքի մեջ գտնվող նախագիծը մշակում է կառավարության կողմից մատուցվող ծառայությունների փոխգործունակության միասնական հարթակ և ստեղծում է մեկ պատուհան՝ պետության բոլոր սահմանային անցակետերի համար: Մեկ այլ՝ նոր սկսված նախագիծն էլ նպատակ ունի «ընդունարան» ապահովել կառավարության փոխգործունակության հարթակի համար՝ քաղաքացիներին և բիզնեսներին հնարավորություն տալով ծառայություններ ստանալ առցանց ռեժիմով:

ԵՄ-ն նաև աջակցում է լավագույն էլեկտրոնային ծառայությունների որոշմանը՝ մասնակցելով առնվազն 35 հիմնական թվային ծառայությունների կատալոգի քարտեզագրմանն ու մշակմանը: Կկատալոգի ներկայիս հայկական թվային ռեսուրսների գույքագրում, ինչպես նաև կզնահատվեն ընթացիկ գրանցամատյանները, թվային տվյալների շտեմարաններն ու տեղեկատվական համակարգերը՝ նպատակ ունենալով ճարտարապետական տարանջատում կատարել գործառնական (backoffice) և վարչական (front-office) ծառայությունների միջև: Հիմնվելով այս ճարտարապետական հայեցակարգի վրա՝ կվերափոխվեն առնվազն 35 ծառայությունների բիզնես գործընթացներն ու կմշակվեն էլեկտրոնային նույնականացման կիրառման և օգտագործման տարածմանն ուղղված միջոցառումներ:

Վերջապես, վերջերս մեկնարկած մի նախագիծ էլ նպատակ ունի «ընդունարան» ապահովել կառավարության փոխգործելիության հարթակի համար՝ քաղաքացիներին և բիզնեսներին հնարավորություն տալով ծառայություններ ստանալ առցանց:

